

տրել, իւր սրտին ազնուութեամբը թշուառ մ'ու-
րախացընել ուզելով՝ կնութեան առաւ զՀովհաննիս-
մէ († 1738) զդուստր Հանցի, (Hans Յովհաննէս)
որ գերի ինկած եւ յետոյ որդեգրեալ էր Խա-
չուկ անուն մէկէ մը: Կը համարուի՝ թէ Հանց
Աւստրիացի էր, բայց ի Հունգարիա ծնած Հայ-
ազգի: Այս ամուսնութենէն չորս զաւակ ունե-
ցաւ. անդրանիկն՝ Միքայէլ, որ Հռոմ Միապէլ
պատուանունն կը կրէր, երկրորդն՝ Կարապետ,
հայր պարոն Անդրէի եւ Թերեզայ Տիւղեանց.
երրորդն՝ Յակոբ, որ կարճակեաց կը վախճանի,
եւ չորրորդն՝ Երանուհի:

Յովհաննէս՝ որ ուսումնասէր եւ կրօնասէր
էր, իւր կենդանութեան ժամանակ ազգատոհմին
պայծառութեան ոգւով չափ աշխատելէն ետեւ՝
1744ին Մարտի 6ին կը փակէ իւր աչուրներն
յաւիտենականութեան մէջ բանալու համար: Իւր
զգուշաւոր շրջահայեցութեամբն ի գերեւ հա-
նեց իրեն դէմ արձակուած՝ չար նախանձու սլա-
ցեալ նետերն:

